Արձանագրություն 7

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/52» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 09.01.2020թ. ժամը 17:00-ին:

Հանձնաժողովի նախագահ

Ա.Վարդանյան - ՀՀ ֆինանսների նախարարի մամուլի քարտուղար ԳՊ/ԳԱՊ,

Անդամներ

Հ.Համբարձումյան – ֆինանսների նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի ավագ մասնագետ ԳՊ/ԳԱ

Է. Բաղդասարյան – ՀՀ ՖՆ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի ավագ մասնագետ ԳՊ/ԳԱ

Ա.Դոյդոյան - ՀՀ ՖՆ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի ավագ մասնագետ ԳՊ/ԲԱ

Գնումները համակարգող

Լ. Սահակյան՝ - Ծրագրերի իրականացման վարչության գնումների բաժնի ավագ մասնագետ

Բացակայում է՝

Ջ.Սամսոնյան- ՀՀ ՖՆ զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (ԳՊ/ԲԱ)

1. **<u>Տեղեկություններ գնման գործընթացի կասեցման վերաբերյալ</u>**

1.1 Հանձնաժողովը ընդունեց ի գիտություն, որ «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/52» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ ստացվել է բողոք «Աութսորս» ՍՊԸ -ի կողմից (Ն/ԲՔԱ-ԳՆ/2/106-2020 բողոքը կցվում է):

1.2 Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի՝ հանձնաժողովը որոշեց կասեցնել հայտերի բացման նիստը մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշումը տեղեկագրում հրապարակելու օրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0:

2. **<u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը</u>**

ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/52 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել բողոքներ քննող անձի կողմից բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշումը տեղեկագրում հրապարակելու օրվանից հետո ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Վարդանյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Հ.Համբարձումյան

_____ Է. Բաղդասարյան

_____ Ա.Դոյդոյան

Գնումները համակարգող ՝ _____ Լ.Սահակյան

Протокол 7

Протокол заседания оценочной комиссии об открытии и оценке заявок на запрос котировок для нужд министертва финансов РА по коду «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/52»

09 января 2020г.

Участвовали

Председатель комиссии

А. Варданян – Пресс-секретарь министра финансов Республики Армения,

Члены комиссии

А. Амбарцумян – Старший специалист отдела информации и связей с общественностью министерство финансов Республики Армения,

Э. Багдасарян – Старший специалист отдела информации и связей с общественностью министерство финансов Республики Армения,

А. Дойдойян - Старший специалист отдела информации и связей с общественностью министерство финансов Республики Армения,

Координатор по закупкам

Л. Саакян - Старший специалист отдела закупок управления реализации программ министерства финансов Республики Армения

Отсутсвует

Д. Самсонян- Начальник /временно *исполняющий обязанности/* отдела мобилизационной подготовки и гражданской обороны министерство финансов Республики Армения.

1. **<u>Информация о приостановление процесс закупки</u>**

1. Комиссия приняла к сведению, что на запрос котировок для нужд министертва финансов РА по коду «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/52» было получено жалоба от ООО Аутсорс / Ն/ԲՔԱ-ԳՆ/2/106-2020, жалоба *прикрепляется* /.

2. Согласно 1-й части статьи 51 Закона РА о закупках комиссия решила приостановить заседание оценочной комиссии до получения решения об аппелляции.

Решение было принято. За - 4, против - 0.

Председатель комиссии _____ **А. Вараданян**

Члены комиссии _____ **А. Амбарцумян**

_____ **Э. Багдасарян**

_____ **А. Дойдойян**

Координатор по закупкам _____ **Л.Саакян**

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔԸ ՔՆՆՈՂ ԱՆՁԻՆ

Բողոք բերող անձ՝ «Աութսորս» ՍՊԸ
ՀՎՀՀ՝ 02639627
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան,
Սարմենի 1, 2/1 տարածք
Հեռ: 374 94444005
Էլ. Հասցե՝ info@osllc.am

Պատվիրատու՝ ՀՀ Ֆինանսների նախարարություն
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
ՀՀ Ֆինանսների նախարարության կարիքների համար
սեմինարների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման
նպատակով հայտարարված ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/52
ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ

ԲՈՂՈՔ

1. Բողոքի նախապատմությունը և փաստերը

1. ՀՀ Ֆինանսների նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար սեմինարների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է թիվ ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/52 ծածկագրով գնանշման հարցում:
2. Ընթացակարգը կազմակերպված է եղել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15 հոդվածի 6-րդ կետի համաձայն, այն է՝
   Եթե գնման գինը գերազանցում է տվյալ ժամանակահատվածում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը, ապա պայմանագիր կնքվելու դեպքում տվյալ ժամանակահատվածին հաջորդող ժամանակահատվածում նախատեսվում են ֆինանսական միջոցներ գնման պայմանագրով սահմանված գնումն իրականացնելու կամ տվյալ գնումը ժամանակավորապես դադարեցնելու համար (եթե ժամանակավոր դադարեցումը պահանջում է ֆինանսական միջոցներ):
3. Սույն թվականի դեկտեմբերի 24-ին ժամը 12:00-ին մասնակիցները ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն հրավիրվել էին գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, որի արդյունքում դեկտեմբերի 24-ի թիվ 6 Արձանագրությամբ և Պայմանագիր կնքելու մասին հայտարարությամբ «Աութսորս» ՍՊԸ-ն ճանաչվել է ընթացակարգի հաղթող մասնակից:
4. Սույն թվականի դեկտեմբերի 26-ին ընթացակարգի քարտուղարը հրապարակել է ևս մեկ Արձանագրություն 6 /24.12.2019թ./, որի համաձայն հաղթող մասնակից է ճանաչվել «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ն:

2. Բողոքի իրավական հիմքերն ու հիմնավորումները

Սույն թվականի դեկտեմբերի 24-ի ժամը 12:00-ին կազմակերպված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների ընթացքում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահը հայտարարել է, որ մասնակիցների սակարվող գնային առաջարկները չեն կարող պակաս լինել հայտով ներկայացված գնային առաջարկում նշված ինքնարժեքից /համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ կետի, այն

է՝ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից:/, ինչի արդյունքում առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Աութսորս» ՍՊԸ-ն:

Սույն թվականի դեկտեմբերի 24-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, համաձայն որի հաղթող է ճանաչվել «Աութսորս» ՍՊԸ-ն:

Սակայն սույն թվականի դեկտեմբերի 26-ին հրապարակվել են նոր Արձանագրություն համար 6 և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, համաձայն որոնց առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ն՝ այն պատճառաբանությամբ, որ հնարավոր է սակարկում անել գնային առաջարկում նշված իքնարժեքից:

Ինչպես նաև, տվյալ ընթացակարգի շրջանակներում, համաձայն սույն թվականի դեկտեմբերի 26-ին հրապարակված Արձանագրություն 6-ի, անգործության ժամկետի ավարտն է սույն թվականի դեկտեմբերի 29-ը, ինչը հակասում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետի պայմաններին, այն է՝ Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

Այսպիսով, գնահատող հանձնաժողովի որոշումները հանգեցնում են <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածում նշված նախապայմաններին, այն է՝ հանգեցնեում են գնումների գործընթացում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումների:

Հիմք ընդունելով վերոգրյալը,

Խնդրում եմ՝

1. Չեղյալ հայտարարել ՀՀ Ֆինանսների նախարարության կարիքների համար սեմինարների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/52 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում սույն թվականի դեկտեմբերի 26-ին տեղեկագրում հրապարակված թիվ 6 Արձանագրությունը:
2. Չեղյալ հայտարարել ՀՀ Ֆինանսների նախարարության կարիքների համար սեմինարների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/52 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում սույն թվականի դեկտեմբերի 26-ին տեղեկագրում հրապարակված պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

«Աութսորս» ՍՊԸ գլխավոր տնօրեն

Արմեն Սարգսյան

SARGSYAN ARMEN 2611850178

Digitally signed by SARGSYAN ARMEN 2611850178
DN: c=AM, sn=••••••••, givenName=••••••, serialNumber=49ab5c131305, cn=SARGSYAN ARMEN 2611850178
Date: 2020.01.08 16:26:25 +04'00'